


# ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՁԻԱՐՅԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ

(Առարկայական խմբակների համար)



1920 թ.

10.07.2013

2003d

Հ-23  
մե

8703-53

Հրատ. № 9089

ԹԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆԻՒՄ  
 Գլուխակ. № 2787(բ) Տիբաժ 1000 Պատ. 1052

## ՀԱՄԱՅՆԱՐԴԱՅԻՆ ՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄ- ՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻՇ

### ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Համաշխարհային տնտեսության ուսումնամիջության սույն ծրագիրը սահմանված է մարզախստական-լենինստական խմբակների համար, Մենք այն հաշվի յենք առել համեմատարար պատրաստված ընկերների համար, վորոնք արդին վորոշ գիտելիքներ են ձեռք բերել քաղաքատնտեսության և տնտեսական քաղաքականության մասին (իեղած տարրական դասագրքերի ծավալով):

Ծրագրի նպատակն են ավելի խոր և պարզ պատկերացում տալ մեր կուսակորինին համաշխարհային տնտեսության ներկա վիճակի և այն տնտեսական պայմանների մասին, վորոնց մեջ աշխատում և կոմմունիստական ինտերնացիոնալը և ծավալում իր հեղափոխական զեկավարությունը կապիտալի դեմ պարքարի յելած պրոլետարական մասսաների վրա Այս բոլոր հարցերը պետք են սերտորեն շաղկապին իմպերիալիզմի լենինական թեորիալի և կոմինարենի կոնգրեսաների ու ընդլայնված պլենումների կարեորագույն վորոշումների հետ:

Ծրագիրը քսոն պարագմունքի համար և հաշվի առնված: Քանի վոր նա բազկացած է 13 թեմայից,

ապա ավելի պարզ ու ծանոթ թեմաները պետք են անցնել մեկ պարապմունքի լնթացքում: Մրագրի մշակման կորսը միամյա յեւ:

Համաշխարհային տնտեսության հարցերի մշակման դժվարությունները գրականության հետ են կապված: Համաշխարհային տնտեսության վերաբերող պոպուլյար գրքերը շատ քիչ են, իսկ պոպուլյար գասագրեր՝ բոլորովին չկան: Շատ գրքեր և ժուրնալային հոդվածներ, վորոնք կարող են ոգտագործվել մարքսիստների գրածները չեն և քննադատական վերաբերմունք են պահանջում: Մինչև համապատասխան դասագրքի՝ հրատարակությունը մարքսիստական-լենինիստական խմբակների համար իրքի միասնական ձեռնարկ կարող են ծառայել Մոսկվայի Կոմիտեի Ազիտպրոպ բաժնի առաջադրությունները („ԲՈՄՕԸ պարտ- պարտ պահանջման առաջադրությունները“), Այնուհետ վոչ միայն գրականությունն են մատնանշված, այլև հավելվածներում տրված են շոշափված հարցերին վերաբերող հոդվածներ և գանազան գրքերից հանված հատվածներ \*):

\* ) Համաշխարհային տնտեսության դասագիրը, վորոնքագրած են ըստ Մոսկվայի Կոմիտեյի ծրագլիք, Պետրատի միջայով լույս կտեսնի սույն ուսումնական տարր մ: Իսկ խմբակների համար ձեռնարկներ են հրատարակում „Բ ՈՅՄԸ պարտ- պարտ պահանջման արդեն լույս են տեսել ոգոստոս ամսում, իսկ ամբողջ սեբէմն պատրաստ կլինի մինչև 1929 թվի դեկտեմբերի կնոնը:“

## I. ԹԵՇԱ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչք համար և անհրաժեշտ ուսումնասիրել համաշխարհային տնտեսությունը: Համաշխարհային տնտեսության վիճակը և բանվոր դասակարգի՝ կապիտալիզմի դեմ վարած պալքարի պայմանները:

2. Աշխատանքի միջազգային բաժանումը և նրա բնույթը: Աշխատանքի համաշխարհային բաժանման աշխարհագրական նախադրյալները: Բնական նախադրյալների հարաբերական նշանակությունը աշխատանքի համաշխարհային բաժանման համար: Աշխատանքի հասարակական բաժանումը վորպես միջազգային փոխանակության հիմունք:

3. Առանձին յերկրների տնտեսական կապի զանազան տեսակները -ա) համաշխարհային շուկա և համաշխարհային տնտեսություն բ) կապիտալների համաշխարհային շուկա. գ) ազգ ու նակության գաղթը: Առանձին յերկրների տնտեսական կապերի աճումը և նրանց քաղաքական բաժանվածությունը:

4. «Համաշխարհային տնտեսություն» հասկացողության բնորոշումը: «Համաշխարհային տնտեսությունը» Մարքսի տնտեսական սիստեմում: Համաշխարհային տնտեսությունը և քաղաքատնտեմությունը: Համաշխարհային տնտեսության պատմական տեղը: Համաշխարհային տնտեսությունը և իմպերիալիզմը:

## II ԹԵՄԱ

### ՀԱՄԱՅՆԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Համաշխարհային անտեսության արտադրողական ուժերի աճումը—նոր հայտնաբերումներ, գյուղեր, նոր նյութերի ոգտագործումը։ Գրտության և նրա գործնականի սերտ մերձեցումը։

2. Համաշխարհային ուժացին ապահարատի վիճակը XX դարի սկզբին։ Տվյալներ ածուխի, նավթի և այլ տիպի վառելանյութերի արդյունահանման մասին։ Տարբեր ուժաքաղին ելեմնտների տեսակաբարար կշռոն աշխարհի վառելանյութային բալանսում։

3. Արդյունահանող և արդյունագործող արդյունաբերությունների աճումը։ Ցերկութային հանքանյութի արդյունահանումը։ Տվյալներ՝ չուզունի, պողպատի, պղնձի և այլ մետաղների հալման մասին։

4. Գյուղանահսության զարգացումը։ Հումութի և սննդամթերքների հայթայթման աճումը։ Գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման տեմպերի տարրերությունը։ Տվյալներ՝ բամբակի և բրդի համաշխարհային մշակման և ցորենի, շաքարի, սպառչական պատրաստության մակարությունի և այլ նյութերի արտադրության մակարությունի։

5. Տրանսպորտի և կապի զարգացումը։ Ցերկարության և ծովային տրանսպորտի աճումը։ Նոր նյութերի ոգտագործությունը և արանսպորտային վառելանյութերի խնայողության մեծացումը, փոխադրանի գների եֆանացումը և բեռների քանակության

աճումը։ Կապի թիջոցների՝ հեռազբի, ծովային հեռազբի, հեռախոսի և ռադիոյի զարգացումը։

6. Արտադրողական ուժերի աճման հակասությունները կապիտալիստական հասարակության մեջ։ Արտադրության անիշխանությունը, ծգնաժամերը և պատերազմները վորպես արտադրական ուժերի «զրժություններ» բռնկության բռնկումներ» արտադրական հարաբերությունների գեմ։

## III ԹԵՄԱ

### ՄԶԱՏ ՄՐՑՄԱՆ՝ ՄԵՆԱՇՆՈՐԴԻ ՓՈԽԱՎԿԵԼԸ ՅԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԻՐԱՊԵՏԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Կապիտալի համակենտրոնացումը և կենարունացումը։ Ձեռնարկումների ակցիոներական ձևը և նրա տարածման պատճառները։ Ակցիոներական ընկերությունները վորպես խոշոր կապիտալի տիրապետության գրածիքներ։ «Դուստր» և «թոռ» ընկերությունների սիստեմը։

2. Կապիտալիստական մենաշնորհների առաջացման պատճառները։ Կապիտալիստական մենաշնորհների ձևերը։ Տվյալներ՝ կապիտալիստական մենաշնորհների զարգացման մասին։ Մենաշնորհային գները և մենաշնորհային վաստակը։ Ազատ մրցումը մասնավորական կապիտալիզմով փոխարինելու նշանակությունը։

3. Բանկերի դերը կապիտալիստական մենաշնորհների զարգացման դարաշրջանում։ Բանկային ձեռնարկությունների համակենտրոնացումը։ Բանկերի և արդյունաբերական ձեռնարկությունների փոխհարաբերությունները։

4. «Թիմանսավորման ընկերությունները»: Նըանց ելությունն ու նշանակությունը: Կոնցերնները: Տվյալների կոնցերնների զարգացման մասին:

5. Բանկային և արդյունաբերական կապիտալների միահեռությունը: Ֆինանսական կապիտալը և ֆինանսական ոլիգարխիան: Ֆինանսական ոլիգարխիայի արդապետության ձևը: Ֆինանսական կապիտալի և պետական ապահովատի միաձուլումը:

6. Միջազգային կապերի աճումը և տարբեր լիբերական կապիտալիստական շահերի հակասությունները: Միջազգային կապիտալիստական մենաշնորհների աճումը: Աշխարհի բաժանումը կապիտալիստական մենաշնորհների միջև և այս փաստից ծնող հակասությունները:

#### IV ԹԵՄԱ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՅՑ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապրանքների մասսայական արտադրությունը և վաճառահանման շուկայի ընդլայնման անհրաժեշտությունը: Տարբեր տնտեսական կառուցվածք ունեցող յերկրների փոխանակության գները: Մաքսիմի և մաքսատնալին տարիին նշանակությունը ներածության և արտածության կանոնավորման համար: Պրոտեկցիոնիզմ: Մաքսատնալին միությունների (ուսիւներ) և մաքսատնալին պատերազմները:

2. Արտաքին և ներքին շուկաների փոխհարաբերությունը: Կարտելային գները և մոնոպոլ վաստակը: Վաճառահանման շուկաների համար մղվող կանոնը:

տալիստական պալքարի մեթոդները: Վաճառահանման նոր շուկաներ ձեռք բերելու համար կապիտալիստական յերկրների միջև բռնկած պալքարի լարումը:

3. Կապիտալի արտահանությունը՝ ի՞նչ և նշանակում «կապիտալի եքսպորտ»: Կապիտալի արտահանման աղբյուրները: Կապիտալի արտահանման ձևերն ու տեսակները: Կապիտալի արտահանումը և ապրանքների արտահանումը: Տվյալներ կապիտալի արտահանման չափերի մասին ըստ տարբեր լիբերական կապիտալի արտահանումը:

4. Ար ուսահանյան ներդրությունների հասույթները և նրանց վերառաքումն արտասահման իբրև նոր ներդրություններ: Կապիտալի արտահանման նշանակությունը—այս ներածող յերկրի համար, և բարտահանող յերկրի համար: Բանկային կոնցերնների պալքարն ազդեցության շրջանակների լայնացման և կապիտալի հավելման որյեկտների համար: Ֆինանսական կապիտալը վորպիս կապիտալիստական պատերազմների շարժիչ գողանակ:

5. Պալքար արդյունահանման, հումութիւն, կապիտալների արտահանման և եժան բանվորական ուժի նոր շուկաներ ձեռք բերելու համար: Գաղութների նըշանակությունը կապիտալիստական յերկրների համար: Կապիտալիստական պետությունների գաղութային քաղաքականությունը: Գաղութներն ու կիսագաղութները և ֆինանսական կապիտալի «ազդեցության շրջանակները»: Աշխարհի բաժանումը մեծ պետությունների միջև և նրան նոր վերաբաժանման պալքարը: Միլիոնարիզմը և մարինիզմը վորպիս կապիտալիստական պետությունների զավթողական քաղաքականության անխուսափելի ուղեկիցներ:

## V ԹԵՄԱ

ԽՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՄԱԿԱՆ ԶԱՐԴԱՑ-  
ՄԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐԱՎԱՓՈՒԹՅՈՒՆԸ

1. Իմպերիալիզմի տնտեսական հիմունքները—  
ա) կապիտալիստական միավորությունների կազմու-  
թյունը, բ) արդյունաբերական և բանկային կապիտալնե-  
րի միաձուլումը, գ) վաճառահանման շուկաների և հու-  
մուլթի աղբյուրներ ձեռք բերելու համար մղվող պար-  
գարը, դ) կապիտալի արտահանությունը, ե) աշխար-  
հի բաժանումը կապիտալիստական միությունների մի-  
ջև, զ) իմպերիալիստական պետությունների միջև աշ-  
խարհը վերաբաժանելու նպատակով մղվող պայքարը:

2. Կապիտալիզմի զարգացման անհավասարաչա-  
փության ուժեղացումը: Անհավասար զարգացման ո-  
րենքը վորպես իմպերիալիստական դարաշրջանի հա-  
մաշխարհային տնտեսության անիշխանության և հա-  
կասությունների հետեւանք: «Գերիմպերիալիզմի» թե-  
որիայի (Կառուցկու) անձշտությունը:

3. Լենինը «անհավասարաշափ զարգացման որեն-  
քի» մասին: Տրոցկու սխալն իմպերիալիզմի շրջանի  
«անհավասարաշափ զարգացման որենքի» «անպալմա-  
նական նշանակությունը» ժխտելու համար: Տրոցկիզմի  
քննադատությունը կապիտալիզմի զարգացման անհա-  
վասարաշափության հարցում:

## VI ԹԵՄԱ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐՍՅՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. Անգլիայի և Գերմանիայի մրցակցությունը հա-  
մաշխարհային շուկայում: «Գաղութների վորոնումների  
ընթացքում» Գերմանիան դեմ և առնում Անգլիայի  
ընդդիմագրությանը: Անգլիայի և Գերմանիայի ուսու-  
մածնվային մրցակցությունը: Անգլիայի և Գերմանիայի  
հակասություններն Աֆրիկայում:

2. Գերմանիայի և Ֆրանսիայի միջև յեղած տըն-  
տեսական հակասությունները: Ելզաս-Լոտարինգիայի  
հարցն ածուխի և լերկաթի հարց եր: Գերմանիայի և  
Ֆրանսիայի ընդհարումներն Աֆրիկայում: Մարոկկօյն  
հարցը վորպես համաշխարհային պատերազմի պատ-  
ճառներից մեկը:

3. Ռուսաստանի և Գերմանիայի միջև յեղած տըն-  
տեսական հակասությունները: Այդ պետությունների  
տնտեսական հակասությունների բաղկացմը Մերձա-  
վոր Արևելքում: Բերլին-Բաղդադ յերկաթուղարքիծը և  
Ռուսաստանի ընդդիմագրությունն այս նախագծի ի-  
րականացմանը: Դարդանելի հարցը և ռուսական հացի  
արտահանումն արտասահման:

4. Համաշխարհային պատերազմի անխուսափելի-  
ությունը՝ շնորհիվ խոշոր կապիտալիստական պետու-  
թյունների միջև ստեղծված անհաղթահարելի հակա-  
սությունների: Համաշխարհային պատերազմը վորպես  
իմպերիալիստական շրջանի հակասությունների լուծ-  
ման միտկ միջոց:

## VII ԹԵՍԱ

### 1914—1917 թ. Թ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինչի՞ համար եյին կռվում խոշոր կապիտալիստական պետությունները 1914—1918 թ. թ.: Համաշխարհալին տնտեսությունը պատերազմի ժամանակ:

2. Կռվող պետությունների տնտեսության վիճակը: Արտաքին առևտրի հարաբերությունները Գերմանիայի և չեղոք յերկրների միջև: Կապիտալիստական յերկրների ժողովրդական տնտեսության ռուսականացումը պատերազմի ժամանակ: պետական կապիտալիզմը կռվող յերկրներում:

3. Անտանտայի «անտեսական ծրագիրը»: Գերմանիայի ծրագիրը հաղթության դեպքում: Դաշնակիցների տնտեսական պատերազմը Գերմանիայի դեմ:

3. Ամերիկայի զ'րը համաշխարհալին պատերազմի մեջ: Դաշնակիցների մատակարարումից ստացված հասուլթը: Ինչի՞ համար Ամերիկան 1917 թ. ապրիլին դուրս յեկալ Գերմանիայի դեմ:

## VIII ԹԵՍԱ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. Համաշխարհալին պատերազմի ծախքերը: Ինչպիսի փոփոխություններ մտցրեց համաշխարհալին պատերազմը կռվող յերկրների եկոնոմիկային:

2. Արտադրողական ուժերի քայլքայումը համաշխարհալին պատերազմի ժամանակ: Մանր ինդուստրի-

ալի վիճակը: Գյուղատնտեսության վիճակը: Արդյունաբերության մյուս ճյուղերի վիճակը: Կռվող պետությունների քայլքայումը: Պարտապանության աճումը:

3. Զարգացման անհավասարաչափությունը և համաշխարհալին տնտեսական կինտրոնների տեղափոխությունը պատերազմի ժամանակ: Ցեղուղալի դրությունը համաշխարհալին պատերազմի վերջում:

## IX ԹԵՍԱ

### ԱՄԵՆԱՍՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ՇՐՋԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1. Հետպատերազման կապիտալիզմի առաջին շրջանը: Հեղափոխական շարժման ուժեղացումը կապիտալիստական բոլոր յերկրներում և բոլոր ժողովրդուազիայի հաջանջը»:

2. Վերսալի խաղաղության պայմանագիրը: Գերմանիայի կորուստներն ըստ Վերսալի պայմանագրի: Իմպերիալիստական մյուս խաղաղության պայմանագրերը—Սեն-Ֆերմենտան խաղաղության դաշնը Ավստրիայի հետ, Տրիբոնիան պայմանագիրը Հունգարիայի հետ և Ակրի գաշնագիրը Տաճկաստանի հետ: Բալկանիզացիան և Ցեղուղալի անդամանատությունը—ա) նոր պետությունների քանակի ավելացումը, բ) մաքսատնացին սահմանների բազմացումը, գ) վալյուտաների և տարիքների քանակության ավելացումը:

3. 1920—21 թ. թ. ամենասուր ճգնաժամի պատճառները և առանձնահատկությունները: Արտադրական ապարատի կազմալուծումը, Պրոտեկցիոնիզմի ուժեղացումը: Վալյուտային խառնաշփությունը: Վարկա-

յին կապերի խզումը։ Հետպատերազմյան ճգնաժամի առանձնահատկությունները և նրա կառուցվածքալին բնույթը։

4. Դասակարգային պարբարի սրումը։ Անգուշտության աճումը, աշխատավարձի նվազումը, գործադուների շատացումը։ Գիրմանիալի բանվոր դաստկարգի 1923 թ. պարտությունը վորպիս «կապիտալիզմի» այնասուր ճգնաժամի շերտից դուրս գալու» ըստ կիպր։

## X ԹԵՄԱ

### ԿԱՐԻՏԱԼԻԶՄԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ «ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԸ»

1. Բուրժուազիան անցնում և կապիտալիստական տնտեսության վերականգնման աշխատանքին։ Այդ անցման քաղաքական նախադրյալները։ Արտադրության տարբեր ճյուղերի զարգացման և տարբեր լեռկըրների տնտեսական զարգացման անհավասարաշահությունը։

2. Վերսալի խաղաղության պայմանագրի սնանկությունը։ Դառնեսի պլանի հիմունքները։ Միացյալ Նահանգների վերազարձր Յեփրոպա, Վարկային հարաբերությունների վերականգնումը։ Վալուտաների կալունացումը։

3. «Վերականգնման շրջանի» հակասությունները, գլուղատնաեսության և արդյունաբերության սուր բաժանումը։ 1926 թ. գլուղատնաեսական ճգնաժամը։ Արդյունաբերական և գլուղատնաեսական արտադրանքների գների հեռացումը միմյանցից։ Հետպատերազմյան գլուղատնաեսության առաջընթացքը։

4. Անգլո-ամերիկական ախոյանությունը։ Միացյալ Նահանգների և Անգլիայի պարբար վաճառահանման շուկաների շուրջ։ Պայքար Փինանսական շուկայում։ Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի պարբար նավթի և կառուցւկի շուրջ։ Անգլո-ամերիկական ծովային ախոյանությունը։

5. Միջդաշնակցային պարտքերը։ Պարտքերի կանոնավորումը։ Դաշնակցային պարտքերի և ուղարացիների կապը։

6. Վաճառահանման և հումուզի շուկաների շուրջ մղվող պարբարի ուժեղացումը։ Արտադրական ապարատի վոչ լրիվ բենվածությունը։ Աշխարհի վերաբաժանման համար մղվող պայքարի սրումը։

7. Գաղութների պայքարն իմպերիալիզմի գեմ։ Հեղափոխական շարժումը Հնդկաստանում։ Մարուկոյի ապստամբությունը։ Չինական հեղափոխությունը։

## XI ԹԵՄԱ

### ԿԱՐԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տեխնիկայի և էկոնոմիկայի վիճակը։ Նոր հայտնաբերությունների և նոր կատարելագործությունների ոգտագործումը կապիտալիստական արտադրության մեջ։ Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հակասությունների խորացումը համաշխարհային ընդլայնված տնտեսության մեջ։

2. Կապիտալիստական կարեռագույն լեռկըրների Միացյալ Նահանգների, Անգլիայի, Գիրմանիայի, Ֆրանսիայի և Յապոնիայի տնտեսական կացությունը։

3. Կպուցվածքալին փոփոխություններ համաշխարհական տնտեսության մեջ: Ուժերի դասավորման փոփոխությունները Ազգալին և միջազգային մոնոպոլիստական միավորությունների աճումը հետպատերագոյան կապիտալիզմի մեջ, Պետկազիտալիստական տենդենցիների աճումը:

4. Դառնեսի պլանի վերանայումը՝ դրա պատճառները և հետեւանքները, Յունգի պլանի ընդունումը և նրա նշանակությունը Գերմանիայի համար: Անզվալի և Ամերիկայի հակասությունների հետագա սրումը:

5. Կապիտալիստական ռացիոնալացումը և նրա հակասությունները՝ աշխատավարձի շարժումը, բ) գործազրկության ավելացումը, գ) թերի շաբաթվան անցնելը և դ) աշխատավարձի պակասումը: Բանվոր դասակարգի կառուցվածքային փոփոխությունները, Պրոլետարիատի դասակարգային պատքարի ուժեղացումը:

6. Կապիտալիստական «կայունացման» ընությունը կարությունը և նրա հակասությունները՝ թիրուծությունը, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը և նրա դրսորման ձեւերը: Բուրժուական և սոցիալ-դակրատական տնտեսագետների՝ կապիտալիստական կայունացման մասին կազմած հայացքների քննութափումը:

7. Գողությունների և մետրոպոլիաների պատքարի ուժեղացումը: «Դեկունիզացիայի» թիրոբիան և նրա սխալները:

8. Կապիտալիստական լերկրների և ԽՍՀ Միության պատքարի սրումը՝ չամաշխարհային նոր պատերազմի անխուսափելիությունը՝ վարպես համաշխարհային տնտեսության հարածնուն թափով ուժեղացող հակասությունների պատթյունը:

## XII ԹԵՍԱ

### ԽՍՀՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ


1. Յարական Ռուսաստանի և ԽՍՀՄ գրությունը համաշխարհային տնտեսության մեջ՝ ա) ըստ տնտեսական հարստությունների, բ) ըստ գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրության, գ) ըստ արտածման և ներածման, դ) ըստ ոտարերկրյա կապիտալների ոգտագործման:

2. Ոտարերկրյա կապիտալը՝ մինչհեղափոխական Ռուսաստանում՝ արդյունաբերության մեջ, բ) հաղորդակցության մեջ, գ) բանկերում, Պարտքերի հարցը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Արտասահմանից վարկ ստանալու պրոբլեմը:

3. ԽՍՀՄ արտաքին առևտուրը: Արտաքին առևտուրի մենաշնորհը և նրա նշանակությունը՝ ոտարերկրյա կապիտալի «ներխուժումից» ԽՍՀՄ տնտեսական անկախությունը պահպանելու խնդրում: Արտահանության և ներածման սախահեղափոխական և հետհեղափոխական առաջնորդության համեմատությունը: Համաշխարհային տնտեսության կողմից ԽՍՀՄ «տնտեսության կորպավորման» արոգկիական հայացքը, այդ հայցի սխալները:

4. ԽՍՀՄ ինդուստրիացումը և Յեվրոպական ու Ամերիկայի հետ տնտեսական և տեխնիկական կապ հաստատելու հարցերը: Արտասահմանի տնտեսական կապերի ոգտագործումը ինդուստրիացման նշանական առանձինությունը:

5. ԽՍՀՄ և կապիտալիստական շրջապատման պատքարի սրումը: ԽՍՀՄ վորպես <sup>ՔՐԴ</sup> ողբական գործական հարա-



բերությունների նոր տիպ համաշխարհային տնտեսության մեջ, Խորհրդային կապիտալիստական սիստեմների պայքարը համաշխարհային անտեսության մեջ:

## XII ԹԵՍԱ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱԿ ՊԼԱՆՈՎԻ-ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Համաշխարհային տնտեսության անիշխանությունը: Համաշխարհային արտադրական ուժերի գիշատիչ ոգտագործումը՝ կապիտալիստական պետությունների միջև գոյություն ունեցող կատաղի պայքարի հետեանքով:

2. Կապիտալիզմի «փոռումը»: «Բանտիե-ների դասու կարգի աճումը»:

3 Կապիտալիստական լերկրների միջև գոյություն ունեցող հակասությունների աճումը: Ցամաքային, ծովային և օդային սպառազինումների աճման կատաղի տեմպը: Ապառազինման աճման հետ կապված անարտադրողական ծախքերի ավելացումը: Համաշխարհային պատերազմները և նրանց ավելածությունները համաշխարհային տնտեսության մեջ:

4. Իմպերիալիզմ անկարող ելուծել համաշխարհային տնտեսության ժամանակակից կազմակերպության շրջանակներում գոյություն ունեցող հակասությունները: Կապիտալիզմի և համաշխարհային տնտեսության կրախի անխուսափելիությունը: ԽՍՀՄ վորպես աշխարհի բոլոր պետությունների տապագա միացման (քաղաքական և տնտեսական) նախատիպար: Խորհրդային սիստեմը վորպես գեպի աշխարհի մեկ և կազմակերպված տնտեսությունը տանող համապարհ:

## XIII ԹԵՍԱ

### ԽՍՀՄ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Անցման շրջանի անհրաժեշտությունը կապիտալիզմի և կոմմունիզմի միջև: Այսպիսի անցման նախադրյալներն են՝ պրոլետարական հեղափոխությունը և պրոլետարիատի կազմակերպությունը իրու տասկարգ: Պրոլետարիատի ղիտատուրան վորպես կապիտալիստական հասարակության հեղափոխական փոխարկումը կոմմունիստական հասարակակարգի: Հասկացողություն սոցիալիզմի և կոմմունիզմի մասին: Արտադրության արդյունքների բաշխումը սոցիալիզմի և կոմմունիզմի ժամանակի Յերկու փուլերը: Անհսկանարության անհրաժեշտությունն առաջին փուլում: Աշխատանքի ամբողջ արդյունքի վրա իրավունք ունենալու լասաւլյան լոգունզի քննադատությունը:

2. Խորհրդային տնտեսության ընդհանուր բնութագրությունը: Տնտեսական հիմք հանրակազմերը, նրանց բնութագրությունը և փոխհարաբերությունները: Պետական սոցիալիստական հատվածի առաջնորդող դերը: Խորհրդային տնտեսությունը վորպես անցման շրջանի տնտեսություն կապիտալիզմի և սոցիալիզմի միջև:

3. Խորհրդային տնտեսությունն ուսումնասիրելու մեթոդոգիան: Քաղաքանականության մեթոդները և կատեգորիաները մեխանիկորեն խորհրդացին տնտեսության թերորիալի մեջ փոխադրելու անթույլատրելիությունը՝ շնորհիվ վերջնիս սպեցիֆիկ առանձնահատկությունների: Եթեև պետություն կազմակերպված պրոլետարիատի գիտակցական կամքի նշանակությու-

նը խորհրդային տնտեսության համար: Խորհրդային պետության տնտեսական քաղաքականության ներառումը խորհրդային տնտեսության արտադրմական հարաբերությունների շրջանու կում:

Խորհրդային տնտեսության գիֆֆերենցիալ և անբողջական վերլուծությունը հարցը՝ շնորհիվ տարրեր յեղանակների առկայության: Վերացական թեորիայի յերկատվածային (Ճայռական) վերլուծության՝ անբավարարությունը: Դիմիֆֆերենցիալ վերլուծության՝ իբրև ուսումնասիրության նախնական աստիճանի նըշանակությունը: Խորհրդային տնտեսության միասնության պատճառով անհրաժեշտ է զիֆֆերենցիալ վերլուծությունից անցնել տնտեսության՝ իբրև մի ամբողջի՝ համագրական քննությանը, նրա առանձնահանատուկ գրենցները գուրս բերել կարողանալու համար: Աբստրակցիայի կիրառումը խորհրդային տնտեսության ուսումնասիրության մեջ: Նրա տարբերությունը քաղաքատնտեսական աբստրակցիայից (անհնար և կառուցել թեկուզ և աբստրակտ կերպով, «զուտ խորհրդային տնտեսություն» իտարբերութն զուտ կապիտալիզմից): Խորհրդային տնտեսության թեորիայի հիմնական պրոբլեմները:

4. Ռեգուլատորի պլրորեմը խորհրդային տնտեսության մեջ: Խորհրդային տնտեսության միասնականությունը: Աշխատանքային ծախսումների համեմատականությունը վորպես ամեն մի տնտեսության հավասարակշռության պայման: Ի՞նչպիսի ձեերով և յերեան գալիս այս որենքը կապիտալիստական եկոնոմիկայի, կազմակերպված տնտեսության և անցման միջանի տնտեսության մեջ: Պլանայնությունը և տաշրջանի տնտեսության մեջ:

Իերաբինությունը խորհրդային տնտեսության մեջ: Պետական տնտեսությունը վորպես պլանայնության հիմունք: Կապիտալիստական ելեմենտները և մանր հողագործության պարզ ապրանքային հարաբերությունները վորպես տարբերակնության հիմունք: Պլանի և տարերքի փոխադարձաբար իրար մեջ թափանցիկը: Պլանային սկզբունքի առաջնորդիչ զերը խորհրդային տնտեսության մեջ: Արժեքի որենքի աստիճանական մահացումը պլանային սկզբունքի ուժեղացման հետեւանքով և նրան զուգընթաց: Կապիտալի՝ մեկ ճյուղից մյուսի մեջ տարբերակնորեն հօսելու յերեսութիքացակալությունը և արտադրության գնի կատեգորիայի անկիրառելիությունը խորհրդային տնտեսության վերաբերմանը:

5. Հավելյալ արժեքի կատեգորիայի աստիճանական մահացումը խորհրդային տնտեսության մեջ: Վարձու աշխատանքի և հավելյալ արժեքի անհամապատասխանությունը ԽՍՀՄ պետական արդյունաբերության արտադրական հարաբերությունների բնույթին: Պետական արդյունաբերության հավելյալ արդյունքը և նրա բաշխումը: Հավելյալ արժեքի կատեգորիայի առկայությունը պետակապիտալիստական և մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների մեջ: Բանվորների շահագործման սահմանափակումներն այս ձեռնարկությունների մեջ հետեւանք են խորհրդային պետության պլրութարական բնույթին: Վաստակի կատեգորիայի անկիրառելիությունը պետական արդյունաբերության նկատմամբ և այդ կատեգորիայի սահմանափակումները խորհրդային տնտեսության միուս յեղանակների մեջ: Վաստակի ձեի նշանակությունը խորհրդային տնտե-

սության մեջ: Վաստակի կանոնավորումը խորհրդային անտեսության մեջ, ինպաստ սոցիալիստական շինուարության շահերի: Աշխատավարձի կատեգորիաի տառափական մահացումը խորհրդային անտեսության մեջ: Աշխատավարձը և աշխատանքի արտադրողականությունը:

Առևտրական կապիտալի և առևտրական վաստակի կատեգորիաների անկիրառելիությունը խորհրդային անտեսության հասարակայնացված հատվածի, ինչպես նաև հատվածի և ուրիշի աշխատանքը չշահագործող մանր ապրանքաբարտադրողների միջև տեղի ունեցող փոխանակության նկատմամբ: մասնավոր առևտրական կապիտալի շահագործողական դերի սահմանափակումը:

Խորհրդային վարկի տարբերիչ գծերը: Փոխառությական տոկոսի կատեգորիալի (կապիտալիստական իմաստով) անկիրառելիությունը խորհրդային անտեսության հասարակայնացված հատվածի վերաբերմամբ:

Հողի աղքանացումը խորհրդային անտեսության մեջ և բացարձակ ռենտալի վոչնչացումը: Դիֆերենցիալ ռենտալի կատեգորիայի անկիրառելիությունը և ՍՀՄ չքավորական և միջակային անտեսությունների վերաբերմամբ: Կուլակալին անտեսությունների դիֆերենցիալ ռենտալի հարցը:


6. Վերար ռարրությունը խորհրդ անտեսության մեջ: Սոցիալիստական ընդլայնված վերաբարությունը և նրա տարբերությունը կապիտալիստական ընդլայնված վերաբարությունից (կապիտալի կուտակումից): Սոցիալիստական կուտակումը խորհրդային անտեսության մեջ: Սոցիալիստական կուտակման

աղբյուրներն ու մեթոդները և նրանց տարբերությունը կապիտալիստականներից: Եերկրի ինդրուստրիացումը վորպիս խորհրդային անտեսության մեջ սոցիալիզմ կառուցիլու և քաղաքի ու գյուղի հակաղըրությունները վոչնչացնելու ճանապարհ: Պետական արդյունաբերության առաջնորդողիչ գերը սոցիալիստական շինարարության մեջ: Ինդրուստրիացման ուղղությունն ու տեմպը: Սոցիալիստական ինդրուստրիացման լարված տեսպի անհրաժեշտությունը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերաշխնությունը: Գյուղացիության շերտավորման առանձնահատկությունները խորհրդային անտեսության մեջ: Միջակը վորպես հողագործության կենտրոնական գեմք: Սոցիալիզմի և կապիտալիզմի պայքարը զյուղում: Դասակարգացին պայքարի սրումը ներկա շրջանում: Գյուղացիության գյուղատնտեսական արտադրության կոլեկտիվացման ուղիները: Խորհրդային անտեսությունների և կոլտնտեսությունների ուժգին շինարարության անհրաժեշտությունը: Տրոցկիստների և աջ թեքման էերկրի ինդրուստրիացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցերում կատարած սխալների հյությունն ու արմատները: Մանր գյուղացիական անտեսության կոոպերացումը պետական արդյունաբերության զեկավարությամբ՝ վորպես սոցիալիզմի ճանապարհ: Գյուղացիության գյուղատնտեսական արտադրության կոլեկտիվացման ուղիները: Պրեորբաժենսկու այսպիս կոչված «սոցիալիստական սկզբնական կուտակման» որևէ սխալական բնությը:

Խորհրդային անտեսության ճգնաժամերի հարցը: Խորհրդային անտեսության անձնաժաման զարգացման

հնարավորությունը։ Խորհրդավային տնտեսության պատմական անհամաշախությունները և զրա հետ կապված տնտեսական դժվարությունները։ Մեր տնտեսական դժվարությունների այլ պատճառները—կապիտալիստական ելեմենտների գասակարգավիճակներիմությունը, պլանային դիկավարության բնագավառում գոյություն ունեցող թերություններ, արտատնտեսական պատճառներ (անպազաբերությունը, պատերազմի վտանգը)։ Մեր անտեսական դժվարությունների զանազանությունը կապիտալիստական ճգնաժամերից և այդ դժվարությունների հարթման յեղանակները։ Յերկրի ինքուսարիացման և զյուլզանտեսության հասարակականացման գոյություն ունեցող տեմպի պահպանման անհրաժեշտությունը վորպես տնտեսական դժվարությունների վերացման միջոց։ Համաշխարհային տնտեսության հետ մեր ունեցած կապերի աճումը, վորը միաժամանակ տանում ե գեղի մեր անկախության աճումը։ Կապիտալիզմի անհավասարաշափ գարգացման որենքը և ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը։ Սոցիալիստական տարրերի աճումը խորհրդավային եկոնոմիկայի մեջ։ ԽՍՀՄ վորպես համաշխարհային հեղափոխության պատվագալ։



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ



NL0204938

28652